

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՏԻԿԻՆ
ԱՍՏԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Գևորգյան.

Ի պատասխան Ձեր 09.09.2014թ. 36/218 գրության, հայտնում եմ հետևյալը.

Առողջապահությունը Երևանի քաղաքապետարանի գործունեության և իրականացվող ծրագրերի գերակա ուղղություններից է, որի հիմնական նպատակներն են հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, ախտորոշումը և բուժումը, բուժօգնության որակի ապահովումը և մատչելիության բարձրացումը: Երևանի բնակչության առողջությունը պահպանելու և բարելավելու նպատակով առողջապահության ոլորտում իրականացվում են բնակչության առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնություն ապահովելու, ինչպես նաև հատուկ նշանակություն ունեցող հիվանդներին բժշկական օգնություն (այդ թվում՝ տուբերկուլյոզի դեմ պայքարի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում), դեղորայքային և բնակչության հիգիենիկ ու համաճարակային անվտանգությունն ապահովելուն միտված հանրապետական և համայնքային նպատակային ծրագրեր:

Երևանում կենտրոնացած է երկրի առողջապահական համակարգի հզորությունների 2/3-ը: 2012թ.-ից Երևանում բնակչության ամբուլատոր-համաբուժարանային և հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն

իրականացնում են առողջապահական 108 կազմակերպություններ, որից Երևանի ենթակայությամբ գործում են թվով 32 առողջապահական հաստատություններ /5 բժշկական կենտրոն, այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 2 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց, 2 ծննդատուն, 2 դիսպանսեր, 1 շտաբուժօգնության ծառայություն և 1 գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 1 ծննդատուն և 22 պոլիկլինիկա/:

Բնակչության բուժսպասարկման որակը բարելավելու և առավել մատչելի դարձնելու, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունները տեխնիկապես հազեցնելու նպատակով՝ «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում» ծրագրով Երևանի քաղաքապետարանի կողմից 2014 թվականին ձեռք է բերվել 14 անուն բուժսարքավորում, այդ թվում՝ 2 ռենտգենային սարք, 5 ուլտրաձայնային հետազոտման սարք՝ կարդիոտվիչով, 1 ուլտրաձայնային հետազոտման սարք /դոպպլեր/, 2 կոլպոսկոպ և 4 իմունաֆերմենտային անալիզատոր:

Երևանի սոցիալապես անապահով բնակչության համար պետության կողմից երաշխավորված դժվարամատչելի և թանկարժեք հետազոտությունները մատչելի դարձնելու նպատակով «Բնակչությանը կոմպյուտերային տոմոգրաֆիային ծառայության տրամադրում» ծրագրով առաջին անգամ ձեռք է բերվել համակարգչային տոմոգրաֆիային ծառայություն: Մույն հետազոտությունը շատ կարևոր է առանձին հիվանդությունների ախտորոշումը և արդյունավետ բուժումը կազմակերպելու համար: Նշված ծառայության ձեռքբերումը հնարավորություն է տալիս որոշ չափով մեղմելու սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովելու առանձին խմբերում ընդգրկված անձանց նշված ծառայության տրամադրումը:

Առողջապահության ոլորտի գերակա ուղղություններից է նաև Երևանի ենթակայության առողջապահական հիմնարկների տեղային ջեռուցման համակարգերի ներդրման աշխատանքների ավարտումը, ինչպես նաև առողջապահական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը:

2010-2014 թթ. ընթացքում իրականացվել է նշված գերակայության ապահովմանն ուղղված մի շարք գործողություններ (շենքերի մասնակի վերանորոգում, ջեռուցման համակարգի անցկացում, թեքահարթակների կառուցում:

Միայն 2014թ. Երևան քաղաքի բյուջեից նշված գերակայության ապահովման համար «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվել է 50000.0 հազար դրամ, որի շրջանակներում Երևանի ենթակայության «Թիվ 15 պոլիկլինիկա» և «Սարի Թաղ» պոլիկլինիկա ՓԲԸ-ներում կատարվել են ջեռուցման համակարգի անցկացում, իսկ «Կարմիր Բլուր» պոլիկլինիկա ՓԲԸ-ում՝ պատուհանների փոխարինում:

Ամեն տարի արդեն ավանդական է դարձել մարտի 8-ից ապրիլի 7-ը կանանց միամսյակին նվիրված «Ձեզ համար, կանայք» խորագրով քաղաքապետարանի կողմից իրականացվող առողջապահական ակցիան: 2014 թվականին ակցիայի շրջանակներում բացառապես անվճար մատուցվել են գինեկոլոգիական, ակնաբուժական և սրտաբանական ծառայություններ, ընդհանուր վիրաբուժություն: Ակցիային մասնակցել է 26144 կին, առաջնային զննում է անցել 16286-ը, հետազոտվել է 13281-ը, բուժօգնություն է ցուցաբերվել 10803-ին: Վիրահատման ենթակա է եղել 1938 կին, 1911-ի պարագայում կատարվել է վիրահատական միջամտություն, որից 401՝ գինեկոլոգիական, 698՝ ակնաբուժական, 214՝ ուռուցքաբանական, 598՝ այլ վիրահատություններ, մնացած 27 կանայք ստացել են ստացիոնար բուժում: Համակարգչային տոմոգրաֆիայի ծառայություն մատուցվել է 42 դեպքում, իսկ կոնսերվտիվ բուժում՝ 96:

«Երևանյան ամառ 2014» ծրագրի շրջանակներում 2014 թվականի օգոստոսի 1-15-ն իրականացվել է «Երևանյան ամառ» առողջապահական ակցիան, որի շրջանակներում բացառապես անվճար իրականացվել է սիրտ-անոթային, վահանաձև գեղձի և կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտություններ: Ակցիային մասնակցել են 1373 քաղաքացի, որի 533 քաղաքացու համար կատարվել է վահանաձև գեղձի հետազոտություն, 228 քաղաքացու համար՝ սրտի ուլտրաձայնային հետազոտություն, իսկ 117 քաղաքացի ուղեգրվել է համակարգչային տոմոգրաֆիայի հետազոտության:

Պետության կողմից երաշխավորված բժշկական անվճար օգնության և սպասարկման բնագավառում 2014թ. մարտ-մայիս և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համար Երևանի հաշմանդամություն ունեցող անձանց հատկացվել են վերականգնողական առողջարանային բուժման ուղեգրեր հետևյալ քանակությամբ. «Գանձաղբյուր» առողջարանային կենտրոն՝ 120, Արզնի՝ 36, Վանաձոր՝ 39, Ջերմուկ՝ 30 ուղեգիր: Ուղեգրերը տրամադրելու գործընթացն իրականացվում է ըստ սահմանված

կարգի, իսկ բաշխման ժամանակ առաջնահերթության իրավունք է վերապահվում
Երևանում բնակվող հաշմանդամ ազատամարտիկներին, զոհված ազատամարտիկների
ընտանիքների հաշմանդամ անձանց, մանկուց հաշմանդամներին, Չեռնոբիլի վթարին
մասնակից և բռնադատված հաշմանդամներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ